ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը		*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Արձանագրություն	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀԱԳՆՊՏ 2017.07.26/1(38)	*Ընդունման վայրը*	
Ընդունող մարմինը	Հայաստանի Հանրապետություն	*Ընդունման ամսաթիվը*	15.06.2015
Ստորագրող մարմինը		*Ստորագրման ամսաթիվը*	15.06.2015
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	31.12.2016	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի հիմնադրման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ղրղզստանի Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը, Տաջիկստանի Հանրապետությունը և Հայաստանի Հանրապետությունը, այսուհետ՝ Կողմեր,

«Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի հիմնադրման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 6-րդ հոդվածին համապատասխան,

համաձայնեցին ներքոնշյալի մասին.

Հոդված 1

Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Պայմանագրի և Պայմանագրի անբաժանելի մասը համարվող «Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի մասին» կանոնադրության (այսուհետ՝ Կանոնադրություն) անվանման և ամբողջ տեքստում «Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամ» բառերը փոխարինել «Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամ» բառերով՝ համապատասխան հոլովով:

2. Պայմանագրի 2-րդ հոդվածը լրացնել 5-րդ պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«- սոցիալական ոլորտներում պետական ծրագրերի ֆինանսավորման նպատակով Հիմնադրամի՝ ցածր եկամուտ ունեցող մասնակից պետություններին դրամաշնորհների տրամադրման համար:»

3. Պայմանագրի 2-րդ հոդվածի 6-րդ պարբերությունում «վճարման, ժամկետային սահմանափակման և վերադարձման պայմաններով» բառերից հետո ավելացնել «, բացառությամբ Հիմնադրամի զուտ շահույթի մասնաբաժնի հաշվին սոցիալական ոլորտներում պետական ծրագրերի ֆինանսավորման նպատակով դրամաշնորհների տրամադրումից» բառերը:

4. Պայմանագրի 5-րդ հոդվածում «ԵվրԱսՏՀ-ի ինտեգրման կոմիտեն» բառերը փոխարինել «Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարությունն» բառերով:

5. Պայմանագրի 6-րդ հոդվածը լրացնել 2-րդ պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Փոփոխություններ կատարելու մասին արձանագրությունները ուժի մեջ մտնելուց հետո համարվում են սույն Պայմանագրի անբաժանելի մասը»:

6. Կանոնադրության 13-րդ հոդվածի 2-րդ կետի «ժբ» ենթակետը լրացնել նոր՝ 5-րդ պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«- սոցիալական ոլորտներում պետական ծրագրերի ֆինանսավորման նպատակով Հիմնադրամի միջոցներից դրամաշնորհների տրամադրման կարգը,»:

7. Կանոնադրության 17-րդ հոդվածի 2-րդ կետում «ԵվրԱսՏՀ-ի ինտեգրացիոն կոմիտեի քարտուղարությունը» բառերը փոխարինել «Եվրասիական զարգացման բանկը» բառերով:

Հոդված 2

1. Սույն Արձանագրությունը ստորագրման պահից ժամանակավորապես կիրառվում է Կողմերի կողմից՝ բացառությամբ այն Կողմի, որը վերապահում է կատարել սույն դրույթի՝ իր նկատմամբ չկիրառվելու կապակցությամբ: Սույն Արձանագրության վերաբերյալ այլ վերապահումներ չեն թույլատրվում:

Սույն Արձանագրությունը Կողմերի համար ուժի մեջ է մտնում Պայմանագրի 6-րդ հոդվածով սահմանված կարգով:

2. Սույն Արձանագրության մեկնաբանմանը և (կամ) կիրառմանն առնչվող վեճերը լուծվում են Պայմանագրի 7-րդ հոդվածին համապատասխան:

Կատարված է 2015 թվականի հունիսի 15-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն:

Սույն Արձանագրության բնօրինակը պահվում է Պայմանագրի 5-րդ հոդվածում նշված Ավանդապահի մոտ, որը յուրաքանչյուր Կողմին և Պայմանագրին միացած պետություններին ու միջազգային կազմակերպություններին կուղարկի դրա հաստատված պատճենները:

Բելառուսի Հանրապետության անունից	**Ղազախստանի Հանրապետության անունից**	**Ղրղզստանի Հանրապետության անունից**
/ստորագրություն/	*/ստորագրություն/*	*/ստորագրություն/*
Ռուսաստանի Դաշնության անունից	**Տաջիկստանի Հանրապետության անունից**	**Հայաստանի Հանրապետության անունից**
/ստորագրություն/	*/ստորագրություն/*	*/ստորագրություն/*

Հայաստանի Հանրապետության վերապահումը

«Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի հիմնադրման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին Արձանագրության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետությունը ժամանակավորապես չի կիրառի «Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի հիմնադրման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը մինչև սույն Արձանագրության 2-րդ հոդվածով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համար դրա ուժի մեջ մտնելը:

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար՝

/ստորագրություն/ **Խաչատրյան Գ. Գ.**

Արձանագրությունն ուժի մեջ է մտել 2016թ. դեկտեմբերի 31-ին